ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի օգոստոսի 17-ից 18-ը
ՌԴ ք. Մոսկվա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Մարինե Աբգարյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 1 բաժնի գլխավոր հարկային տեսուչ,

Աննա Պողոսյան – ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական համակարգերի փոփոխությունների կառավարման և ազդեցությունների գնահատման բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ՌԴ, ք. Մոսկվա, օգոստոսի 17-ից 18-ը

3. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել «Ապրանքների փոխադարձ էլեկտրոնային առևտրի դեպքում անուղղակի հարկերի գանձման կարգի սահմանման մասով Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) նախագծի լրամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետությունների փորձագետների և ԵՏՄ անդամ պետությունների ղեկավարների տեղակալների մակարդակներով կազմակերպված հանդիպումներին:

Հանդիպմանը մասնակցում էին Եվրասիական տնտեսական միությանը անդամակցող պետությունների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ օրակարգով նախատեսված հարցերի քննարկում:

5. Քննարկված թեմաները՝

Նիստի օրակարգի համաձայն քննարկվեցին հետևյալ հարցերը՝

ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակների միջոցով երրորդ երկրների վաճառողների կողմից ԵՏՄ անդամ պետությունների գնորդներին՝ ֆիզիկական անձանց, ապրանքների մատակարարման գործարքների մասով ԱԱՀ-ի գանձում,

ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակների միջոցով ապրանքների իրացման գործարքների մասով, երբ գնորդը և վաճառողը գտնվում են ԵՏՄ նույն անդամ պետության տարածքում, ԱԱՀ-ի գանձում անդամ պետությունների ազգային օրենսդրության համապատասխան,

էլեկտրոնային առևտրի շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունների հարկային մարմինների միջև տեղեկատվության փոխանակում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԵՏՄ անդամ պետությունների փորձագետների մակարդակով կայացած հանդիպման ընթացքում քննարկվեց Արձանագրության նախագծով սահմանված կարգավորումները երրորդ երկրի (ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություն) վաճառողների վրա տարածելու հարցը, որոնք ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակների միջոցով ապրանքներ են մատակարարում ԵՏՄ անդամ պետությունների գնորդներին՝ ֆիզիկական անձանց:

Կայացած նիստի ընթացքում բելառուսական և ղազախական կողմերն առաջարկում էին ԵՏՄ էլեկտրոնային առևտրի հարթակների միջոցով ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններում գրանցված վաճառողների ապրանքների օտարման գործարքների համար գնորդի երկրում գանձել ԱԱՀ ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակներից՝ անկախ սահմանին երրորդ երկրների ապրանքների ներմուծման համար մաքսային վճարներ (այդ թվում՝ ԱԱՀ) գանձված լինելու կամ չլինելու հանգամանքից: Նշյալ առաջարկը Ռուսաստանի Դաշնության կողմից ընդունելի չի համարվել այն հիմնավորմամբ, որ երրորդ երկրների ապրանքների հարկումը պետք է իրականացվի միայն ԵՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգավորումներին համապատասխան:

Նիստի ընթացքում մասնակիցները լսեցին նաև ԵՏՀ հանձնաժողովի մաքսային ոլորտի մասնագետների տեղեկատվությունը Մաքսային միության մաքսային օրենսգրքում էլեկտրոնային առևտրի մասով նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ: Ներկայացված փոփոխությունների համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից առևտրի էլեկտրոնային հարթակներից (ԵՏՄ անդամ պետության հարթակ կամ ոչ ԵՏՄ անդամ

պետության հարթակ) ապրանքների ձեռք բերման դեպքում գնորդի երկրում գանձվելու է միասնական դրույքաչափով մաքսային վճար, որը չի ներառում ԱԱՀ, իսկ անդամ պետության ազգային օրենսդրությամբ հարկերի գանձում նախատեսված լինելու դեպքում՝ նաև հարկեր: Ընդ որում, «Մաքսային միության մաքսային օրենսգրքում փոփոխությունների կատարելու մասին» արձանագրության նախագիծը ուղարկվել է անդամ պետություններին ներպետական գործընթացների համար, որոնք անհրաժեշտ են արձանագրությունը ստորագրելու համար:

ԵՏՄ անդամ պետությունների փորձագետների և ԵՏՄ անդամ պետությունների ղեկավարների տեղակալների մակարդակներով քննարկումների արդյունքում վերոնշյալ հարցի շուրջ միասնական դիրքորոշում չձևավորվեց, և որոշվեց հարցին անդրադառնալ և քննարկումները շարունակել «Մաքսային միության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի ներպետական գործընթացների ավարտից հետո (ս.թ. սեպտեմբերի 25-ից հետո):

ԵՏՄ հարթակների միջոցով ապրանքների իրացման գործարքների մասով, երբ գնորդը և վաճառողը գտնվում են ԵՏՄ նույն անդամ պետության տարածքում, ԱԱՀ-ի գանձումն անդամ պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան իրականացնելու հարցի մասով քննարկումների արդյունքում անդամ պետությունների ներկայացուցիչների կողմից առարկություններ չներկայացվեցին:

Էլեկտրոնային առևտրի շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունների հարկային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման հարցի հետ կապված ԵՏՄ անդամ պետությունները, բացի Բելառուսի Հանրապետությունից, դեմ արտահայտվեցին էլեկտրոնային առևտրի շրջանակներում տեղեկատվության փոխանակմանը՝ այն հիմնավորմամբ, որ այն իր մեջ պարունակում է հարկային և առևտրային գաղտնիք: Քննարկումների արդյունքով նախատեսվեց հարցին անդրադառնալ ԵՏՄ անդամ պետությունների միջև էլեկտրոնային առևտրի շրջանակներում տեղեկատվության փոխանակման նպատակով 2025թ. միասնական տեղեկատվական հարթակի գործարկման շրջանակներում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքների հիման վրա ընդունվեց ԵՏՄ տարածքում ֆիզիկական անձանց վաճառվող ապրանքների էլեկտրոնային առևտրում ԱԱՀ-ի հարկային

վարչարարության հարցերը կարգավորող արձանագրության նախագծի քննարկման վերաբերյալ՝ չկարգավորված հարցերի մասով արձանագրություն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկներ՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նիստի արդյունքում ընդունված արձանագրության համաձայն որոշվեց երրորդ երկրների վաճառողների հարցին անդրադառնալ և քննարկումները շարունակել «Մաքսային միության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի ներպետական գործընթացների ավարտից հետո (ս.թ. սեպտեմբերի 25-ից հետո):

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիանա Հրաչյան

Հասմիկ Պողոսյան

23.08.2023թ.